

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ. ՁԵՌԱԳԻՐ № 2679

Հայ ժողովրդի ձեռագրական մշակույթի բազմահազար արժեքավոր հուշարձանների մեջ իր արտակարգ կարևորությամբ և նշանակությամբ առանձնանում է Մաշտոցի անվան մատենադարանի № 2679 ձեռագիրը: Այն չի փայլում ո՛չ իր նուրբ ու մշակված մագաղաթով, ո՛չ խիստ և զգաստ երկաթագրով, ո՛չ ոսկեցկար զարդարվածությամբ ու թանկագին մետաղյա ակնակուռ կազմով:

Նրա գրանյութը թուղթն է, որ այն ժամանակ կոչվում էր «աղքատ քարտես», իսկ այսօր հայերեն ամենահին թղթյա ձեռագիրն է և աշխարհում հնագույններից մեկը: Նրա գիրը բոլորգիրն է, որ այն ժամանակ կոչվում էր «անհեթեթ գիրք», իսկ այսօր հայերեն բոլորգրված առաջին ձեռագիրն է, գրատեսակ, որ դարձավ գրչության հիմնական գիր, ապա տպագրության գիր: Մեզ հասած առաջին աշխարհիկ բովանդակությամբ ձեռագիր ժողովածուն է, որն իր մեջ ամբարում է հսկայական քանակությամբ գիտական նյութ, որոնցից շատերը միայն այդտեղ են հանդիպում, հեղինակներ, որոնց նույնպես միայն այդտեղ ենք հանդիպում և մինչև այսօր այդտեղ էլ մնացել են:

Սակայն ձեռագիրն առավել արժեքավոր է որպես X դարում որոշակի նպատակով ստեղծված ժողովածու (որի մեջ միացած են երկու ինքնուրույն ժողովածուներ կամ մատենագրական երկեր), իսկ դրանց ստեղծող Դավիթ քահանան` X դարի մատենագիր, որը հայտնի է դառնում ուղիղ հազար տարի հետո:

Այժմ ավելի մոտիկից ծանոթանանք ձեռագրին:

Միջնադարյան ձեռագիրը նյութական և հոգևոր մշակույթի բարդ և բազմակողմանի հուշարձան է, որի մեջ մարմնավորված են ոչ միայն նրա ստեղծման, այլև նախորդ (երբեմն նաև հաջորդ) ժամանակների պատմությունն ու մտածողությունը, գիրն ու գրչության արվեստը:

Ձեռագրերից շատերը նման են ճարտարապետական այն հուշարձաններին, որոնք մեր օրերն են հասել տարած վերանորոգումների մի քանի շերտերով: Ինչպես այդ շերտերի և հիմնակառույցի` միմյանց նկատմամբ ունեցած առնչություններն ու փոխհարաբերությունները պարզելուց հետո է միայն հնարավոր դառնում գնահատել ճարտարապետական հուշարձանը, այնպես էլ առանձին վերանորոգված ձեռագրերի, հատկապես ժողովածուների, այդ կարգի ուսումնասիրություններից, այսինքն շատերը բնագրական և հնագրական տեսակետից

բացահայտելուց հետո միայն կարելի կլինի լիարժեք խոսք ասել պատմական այդ հուշարձանների մասին:

Այդ առումով խիստ բնորոշ է Մատենադարանի № 2679 ժողովածուն, հայերեն հնագույն թղթյա ձեռագիրը:

Դեռևս միջնադարում ձեռագիրը ամբողջությամբ կամ հատվածներով օրինակ է ծառայել այլևայլ ընդօրինակությունների համար:

Մինչև XIX դ. սկզբները այն գտնվում էր Բաղեշի վանքերից մեկում, ապա տարվում է Կարին, ուր մաս է կազմում տեղի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու հավաքածոյի: 1829 թվականին Կարինի բնակչության մի մասի հետ, որոնց գլխավորում էր նույն արքեպիսկոպոսը, ձեռագիրը տեղափոխվում է Ախալցխա: Առաջնորդի մահից հետո (1856 թ.) նրա հավաքածոն բերվում է Էջմիածին (1869 թ.): Գևորգ Դ կաթողիկոսի (1866–1882) ջանքերով ձեռք բերված ձեռագրերից կազմվում է մի հավաքածո, որը կոչվում է «Գևորգյան», սրա մեջ են մուծվում նաև Ախալցխայից բերված ձեռագրերը, ուր թղթյա հիշյալ ձեռագիրը կրում է 102 համարը:

Երբ 1881 թվականին ձեռագիրը Էջմիածնի մատենադարանի Գևորգյան հավաքածո մուծվեց, արդեն ինը հարյուր տարեկան էր:

Պատկառելի հնությունը, թղթի վրա գրված լինելու հանգամանքը, աշխարհիկ և կրոնական նյութերի բազմազանությունը և հարստությունը իրենց վրա են բևեռում տարբեր մասնագետների ուշադրությունը, որոնք ձեռագրից առանձին նյութեր են հրապարակում և ուսումնասիրում:

Ձեռագրի առաջին ուսումնասիրողներից Գալուստ Տեր-Մկրտչյանը այն համարում է «նշանավոր և ամենաթանկագին հնություն», նույն կարծիքի է Հ. Տաշյանը: Գ. Հովսեփյանի համար ձեռագիրն արժանի է ուշադրության ոչ միայն իբրև Ժ դարի հնագույն թղթի ձեռագիր, այլև իբրև հարուստ բովանդակություն ունեցող գրի հուշարձան:

Այսուհանդերձ, հայերեն հնագույն թղթյա ձեռագիրը, որպես ձեռագրական առանձին հուշարձան իր ամբողջության մեջ դեռևս չի ուսումնասիրվել ու հրատարակվել: Նրանից բարեբախտ վիճակում գտնվեցին Լազարյան և Էջմիածնի ավետարանները, որոնց լուսատիպ նմանահանությունները կատարվեցին համապատասխանաբար 1899 թվականին Մոսկվայում և 1920 թվականին Փարիզում: Հերթն այժմ հնագույն թղթյա ձեռագրինն է, որի նմանահանությունը և նմանատպությունը կիրականացվի նրա հազարամյակի առթիվ 1982 թվականին Երևանում:

Ձեռագիրն ունի 19,5X28,5 սմ մեծություն, 360 թերթ: Մինչ այժմ մի ձեռագիր համարվող մատյանը բաղկացած է տարբեր ժամանակներում գրված երկու մասերից: Թերթեր են պակաս սկզբից, վերջից և միջից: Կազմվել է մի քանի անգամ. այժմյան կազմը 1585 թվականին է:

Առաջին մասը կամ մի ժամանակ ինքնուրույն ձեռագիրը, 1-155 թերթերն է զբաղեցնում: Ունի միասյուն գրություն: Գրված է 981 թվականին, Ղուկաս գրչի ձեռքով, իր հոր՝ Դավիթ քահանայի պատվերով և նյութերի ընտրությամբ: Սկզբից պակասում են Ա-Ե պրակները: Սկզբում այս ձեռագիրն ունեցել է 210 (21X10) թերթ: Պակասում է 55 թերթ:

Երկրորդ մասի գրիչը դարձյալ Ղուկասն է, ստացողը և նյութերի ընտրողը՝ հայրը՝ Դավիթ քահանան: Այն սկսվում է 156 թերթից: Այս մասի առաջին երեք թերթից հետո XI դարում անջատել են 38 թերթեր և փոխարինել նոր բնագրերով:

Շուրջ հազարամյա հնության ձեռագիրն առաջին հերթին աչքի է զարնում իր գրանյութով: Թուղթը ամենաերիտասարդ գրանյութն է, որ փոխարինեց պապիրուսից առաջնությունը վերցրած մագաղաթին և արդեն երկու հազար տարվա պատմություն ունի: Նրա հայրենիքը համարվում է Չինաստանը: Ավանդության համաձայն Ցայ-Լուն է պատրաստել առաջին թուղթը 101 թվականին: Թուղթ էին պատրաստում նաև Սամարղանդում: Այն բերել էին չինացի գերիները: Արաբները VIII դ. յուրացրին թղթի մշակման արհեստը, կատարելագործեցին տեխնիկան և դարձան թղթի պատրաստման և արտահանման հիմնական տնօրինողները: Թղթի արտադրության կենտրոններ դարձան Բաղդատը և Դամասկոսը: Մեզ հայտնի հնագույն թուղթը 800 թվականից է: Պահպանվել են մինչև X դարավերջը գրված մի քանի թղթյա ձեռագրեր, հնագույն արաբերենը՝ 866, Կահիրեից՝ 878, Օքսֆորդի համալսարանի գրադարանինը՝ 974 և Լայպցիգի համալսարանի գրադարանինը՝ 990 թվականներից են: Այս ֆոնի վրա X դարում գրված ամեն մի թղթյա ձեռագիր կարող է համարվել աշխարհի հնագույններից մեկը:

Այս շարքում Մաշտոցի անվան մատենադարանի № 2679 թղթյա ձեռագրի առաջին մասը չորրորդն է իր հնությամբ, իսկ նրա երկրորդ մասը՝ հինգերորդը: Ի դեպ, X դարից մեզ են հասել ևս երկու հայերեն թղթյա ձեռագրեր, դարձյալ մի կազմի մեջ ամփոփված: Դրանք գրված են 999 թվականին Վասպուրականում և Բագրևանդում: Ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում:

Միայն տասներորդ դարից պահպանված և Հայաստանում գրված հայերեն թղթյա ձեռագրերի այս քանակը ցույց է տալիս, որ դրանից շատ ավելին եղել է Հայաստանում և գրանյութ թուղթը պատրաստվել է այնտեղ:

Հայկական ՍՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի և երկրաբանության ինստիտուտների լաբորատորիաներում (ղեկավար՝ քիմ. գիտ. թեկնածու Լ. Խաժակյան) կատարված թղթի և

թանաքի ֆիզիկաքիմիական անալիզի արդյունքները ցույց տվեցին, որ ձեռագրի թուղթը և թանաքը պատրաստված են աշխարհագրական նույն միջավայրում, Հայաստանում, որն ապացուցվում է «էլեմենտների հարաբերական քանակությունների համեմատությամբ»:

Ձեռագրի պատմաբանասիրական, բնագրական քննությունը ցույց տվեց, որ ձեռագիրը գրվել է Անի մայրաքաղաքում և նրա շրջակայքում, հետևաբար թանաքը և թուղթը պատրաստվել են այնտեղ: Թղթի տեխնիկական վիճակը (անհավասար մշակվածություն, կտավատի անմշակ ցողունի մասերի առկայություն որոշ թերթերի վրա, թանաքի և թղթի անհամապատասխանություն, որի պատճառով շատ են թանաքակեր թերթերը) ցույց է տալիս, որ թղթագործները այն պատրաստելու մեծ փորձ չեն ունեցել, և որ այն պատրաստված է կտավատի ցողունից: Շիրակը հայտնի էր կտավատի մշակությամբ, իսկ Անի քաղաքը՝ ձիթհանքերով և կտավագործությամբ ու վուշագործությամբ: Արհեստներով և արհեստավորներով հռչակված Անին կարող էր թուղթ պատրաստել:

Նրա բազմաթիվ արհեստների շարքում ավելանում է նաև մեկը՝ թղթագործությունը:

Հնագույն թղթյա ձեռագիրը շատ կարևոր նշանակություն ունի հնագրական առումով: Այն մեզ հասած առաջին ձեռագիրն է, որ գրված է բոլորգրով: Թյուրիմացաբար այն կոչել են «երկաթագիր» կամ «միջին մեսրոպյան երկաթագիր»: Բոլորգիրը ստեղծվել է մյուս գրատեսակների հետ միաժամանակ, ուստի նույնքան հին է, որքան մյուսները և ծառայել է նախ՝ որպես առօրյա օգտագործման գիր, իսկ ապա նաև՝ գրչության գիր: Էժան թղթի գործածության պայմաններում ձեռագրերը գրվել են դյուրագիծ և մասսայական կիրառություն ունեցող գրատեսակներով, ինչպիսիք էին բոլորգիրն ու շղագիրը և պատահական չէ, որ մեզ հասած հնագույն թղթյա ձեռագրերը (Մաշտոցյան և Վենետիկի Մխիթարյան մատենադարանների) գրված են բոլորգրով և շղագրով, գրիչների իսկ արտահայտությամբ «աղքատ քարտեւի վրա» խոշոր, անհեթեթ գրով»: Թղթյա հնագույն ձեռագրում բոլորգիրը գործածված է երկու մեծությամբ՝ միջին և մանր: Բոլորգրի հետ օգտագործված է նաև երկաթագիրը և գրչագիրը որպես գլխագիր:

Ձեռագրում պատահում ենք և՛ նշանագրերի, և՛ կցագրության: Արև և լուսին բառերը որոշ տոմարական հատվածներում գրվում են միայն նշանագրերով, իսկ «ամ» (տարի) բառը շատ հաճախ կցագրությամբ: Ձեռագիրը հարուստ է կետադրական նշանների գործածությամբ, որոնք կիրառվում են բազմազան առումներով և մեծ նշանակություն ունեն կետադրության ուսումնասիրության համար:

Թվականները գրվում են պատվով (բ), երբեմն նաև առնվում են երկու կողմից զույգ կետերի մեջ (:Բ:):

Պատվոգրված են տերունական անունները, բայց այստեղ հանդիպում ենք համառոտագրության մի այլ եղանակի, կամ բառերի կրճատ գրության:

Հայերեն թղթյա հնագույն ձեռագիրը աչքի է ընկնում հատկապես իր հարուստ բովանդակությամբ: Դավթի ձեռագրերը ինքնագրով մեզ հասած առաջին ժողովածուներն են (առաջինը՝ առավելապես գիտական ու պատմական նյութերի, երկրորդը՝ պատմական և դավանաբանական նյութերի ժողովածու):

Պահպանվել են ձեռագրերի հիշատակարանները. առաջին (981 թ. գրված) ձեռագրի մասին Դավիթ քահանան գրում է, որ ժողովածուն կազմելիս հավաքել է Աթանաս Աղեքսանդրացու որոշ հակաճառություններ, Անդրեասի աշխատությունից որոշ նյութեր և վերջինիս նման տոմարական ամբողջական երկեր կամ հատվածներ, որն ստեղծել է որպես դասագիրք իր որդու և նրա նմանների ուսուցման համար:

Երկրորդ ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ Դավիթ քահանան ժողովածուն պատրաստել է հայ եկեղեցու մղած դավանաբանական պայքարին օժանդակելու և քաղկեդոնականությունը մերժելու նպատակով, որի համար օգտագործել է հայ և օտար բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ նկատելի տեղ են գրավում նաև պատմագիտական, չափագիտական, դրամագիտական երկերից առանձին հատվածներ: Որպես այդպիսին նրանք պատմական, փիլիսոփայական, տոմարական, տիեզերագիտական, չափագիտական, դավանաբանական հսկայական նյութ են պարունակում, ունեն հազվադեպ հանդիպող մատենագրական երկեր, որոնք եզակի լինելուց բացի աչքի են ընկնում գրության հազարամյա հնությամբ:

Ձեռագրում տեղ գտած նյութի հարստության մասին գաղափար տալու համար թվարկենք միայն այն հեղինակների անունները, որոնց երկերից մի շարք առիթներով քաղվածքներ են կատարված (բերում ենք հեղինակներին այբբենական կարգով). Աթանաս Աղեքսանդրացի, Անդրեաս Ժամանակագիր, Ապողինար, Արիոս, Արիստիդես Աթենացի Իմաստասեր, Արիստոտել Իմաստասեր, Բասեղ Կեսարացի, Գրիգոր Սքանչելագործ, Գրիգոր Նյուսացի, Եղիոս, Եպիփան Կիպրացի, Եփրեմ Խորին Ասորի, Եվնոմիոս, Եվսեբիոս Կեսարացի Ժամանակագիր, Զենոբ Եպիսկոպոս, Թեոդորոս քահանա, Կյուրեղ Աղեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի, Հովհաննես Ոսկեբերան, Նոմիոս, Որևգինես, Պետրոս Աղեքսանդրացի, Պողոքսոն, Պրոկղ Եպիսկոպոս, Սևեռիոս, Սոկրնդ Իմաստասեր, Տիմոթեոս Կուզ, Փիլոն Եբրայեցի, Փեղեկա և Ուտաղա Հռոմի հայրապետներ և այլն, և այլն: Սրանց գործերի մեծ մասը թարգմանված են հունարենից և որոշ բնագրեր մեզ չեն հասել այլ լեզուներով:

Պատկառելի է նաև հայ հեղինակների ցանկը, որոնցից մի քանիսը առաջին անգամ հանդիպում են այս ձեռագրում. Գրիգոր Պարթև (IV դ.), Եղիշե, Մովսես Խորենացի, Հովհաննես

Մանդակունի (V դ.), Աթանաս Տարոնացի, Պետրոս Սյունեցի, Դավիթ Յարքացի (VI դ.), Վրթանես Քերթոզ, Անանիա Շիրակացի (VII դ.), Յովհան Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի (VIII դ.), Տաճատ քահանա, Թովմա վարդապետ, Տիմոթեոս վարդապետ, Արտավազդ Մազազունյաց իշխան, Ատոմ Անձևացյաց իշխան (IX-X դդ.), ինքը՝ Դավիթ քահանան, ձեռագրի ստեղծող և որդին՝ Դուկասը (X-XI դդ.), որոնցից նաև առանձին երկեր կան ձեռագրում:

Մատենադարանի № 2679 ձեռագրի մեջ պատկառելի բաժին է ընկնում պատմական բնույթի երկերին: Նրանց մեջ կան զուտ պատմաժամանակագրական, տոմարական-ժամանակագրական, պատմակեղեցական ու պատմամշակութային երկեր ու հատվածներ:

Կան նաև բազմաթիվ մեծ ու փոքր երկեր ու հատվածներ, իսկ գիտական բնույթի աշխատությունների մեջ առանձնացվում են տոմարագիտական, տիեզերագիտական, աստղաբաշխական, աշխարհագրական նյութերը, որոնցից առավել արժեքավոր են հայ մեծ գիտնական Անանիա Շիրակացու երկերը: Դրանց առաջին անգամ այստեղ ենք հանդիպում:

Շիրակացու տոմարական և տիեզերագիտական նյութերի հետ այստեղ կան նաև այդ բնույթի թարգմանական երկեր, սրանց մի մասը Շիրակացին օգտագործել է իր «Քննիկոն» համայնագիտարանի մեջ: Իսկ վերջինս գտնվում էր Անի մայրաքաղաքի մոտ, Արգենայում, այն ժամանակվա հայոց կաթողիկոսարանում:

Թղթյա ձեռագրերի հանդես գալը պատմամշակութային կարևոր երևույթ է հայ իրականության մեջ:

IX-X դարերում Յայաստանը ազատագրվելով արաբական երկդարյա ծանր տիրապետությունից, ապրում է տնտեսական վերելքի կարճատև շրջան: Ստեղծվում ու զարգանում են քաղաքներն ու քաղաքային կյանքը, աշխուժանում են արհեստները և առևտուրը: Այս բոլորը իրենց հերթին նպաստում են հայ մշակույթի աշխարհականացմանը, որն իր արտահայտությունն է գտնում հոգևոր կյանքի տարբեր բնագավառներում. գրականության մեջ այն սկսվում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններով:

Մանկավարժության ու դաստիարակության բնագավառում նշանակալից դեր է կատարում Գրիգոր Մագիստրոսի (V դ.) մանկավարժական գործունեությունը, որը դաստիարակության հիմքում դնում է Անանիա Շիրակացու «Քննիկոնը» քառյակ գիտությունների՝ թվաբանության, երաժշտության, երկրաչափության և աստղաբաշխության ուսուցմամբ:

Մեծանում է ձեռագիր ունենալու, ընթերցելու պահանջը, գնալով ձեռագիրը ավելի է մտնում կենցաղի մեջ և աշխարհականացման պրոցեսը տարածվում է նաև գրչության արվեստի վրա, գրվում են աշխարհիկ բնույթի ձեռագրեր, գրվում են թղթի վրա և բոլորգրով: Ամենամասսայական գիրը, որն ստեղծված էր առօրյա գրականությունների համար, դառնում է

գրչության գիր, այսինքն բարձրանում է գրչության պաշտոնական գրի մակարդակը, իսկ մագաղաթին փոխարինելու է գալիս էժան և մատչելի, ավելի մասսայական գրանյութը՝ թուղթը:

Հայաստանում շատանում են դպրոցները, հիմնադրվում են վանքեր և նրանց կից դպրոցներ, որոնց հիմնական գործը ուսուցումն էր և ձեռագրերի ընդօրինակությունը: Այդ դպրոցներից առավել աչքի ընկնողներն են Կամրջաձորի դպրոցը՝ Արշարունյաց գավառում, Արաքսի ափին, որը վերստին նորոգումն էր դեռևս V դարում Մաշտոցի աշակերտներից Թաթուլի և Վարոսի ձեռքով ստեղծված գրչության դպրոցի: Հռոմոսի վանքը՝ Անիի մատույցներում՝ Ախուրյանի ափին, Նարեկա վանքը՝ Վանա լճի հարավում, որտեղ ապրեց և ստեղծագործեց հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին, Խլաձորի և Հնձուց դպրոցները՝ Բարձր Հայքում, Դպրեվանքը՝ Շիրակում, Ցախաց քարը՝ Վայոց ձորում, Հաղբատը և Սանահինը՝ Գուգարքում և այլն: Այս դպրոցներում աստվածաբանության հետ սովորում էին նաև պատմություն, փիլիսոփայություն, թվաբանություն, երգ-երաժշտություն, գրչության արվեստ, մանրանկարչություն, տոմարագիտությունը:

Վանքերին ու դպրոցներին առընթեր հիմնում էին մատենադարաններ: Նշանավոր էր հատկապես Արգինայի մատենադարանը, որը հիմնադրում է Խաչիկ Արշարունի կաթողիկոսը և հարստացնում բազմաթիվ և բազմաբովանդակ ձեռագրերով: Այդ դպրոցներից մեկում, ամենայն հավանականությամբ Արգինայում է ապրել և ստեղծագործել Դավիթ քահանան իր որդի Դուկասի հետ, որովհետև տարբեր ձեռագրերից և գործերից մի քանի հարյուրի հասնող նյութ-միավորները, ինչպես նաև Շիրակացու «Քննիկոնից» առնված նյութերը կարելի էր հայթայթել միայն Արգինայում, որտեղ գտնվում էր կաթողիկոսական հարուստ մատենադարանը:

Մանուկ Աբեղյանը կյանքի և աշխարհայեցության փոփոխություն է նկատում X դարի վերջի և XI դարի սկզբի հայ իրականության մեջ՝ կապված քաղաքների և քաղաքային կյանքի զարգացման հետ, իսկ սրա հետևանքով էլ «աշխարհիկ տարրը հետզհետե ավելի է մտնում եկեղեցական գրականության մեջ, առաջ են գալիս գրական նոր թեմաներ և նոր տեսակներ, նոր լեզվով հորինված, մինչև որ լինում է մեր գրականության աշխարհականացումը... XI դարի առաջին կեսին արդեն՝ մեր կյանքի և մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում, որով կրոնաճգնավորական ոգին տակավ առ տակավ տեղի է տալիս մի ուրիշ ոգու դիմաց, որից չէր կարող և չազդվել հոգևորականը»: Կամ. «X դարի վերջերին և XI դարի առաջին տասնամյակներին է սկիզբը հնի քայքայման, որ և սկիզբն է նոր մտավոր հոսանքի, որ դանդաղ պրոցեսով զարգանում էր տակավին շատ զորեղ կրոնաեկեղեցականի կողքին»:

Աշխարհականացման պրոցեսի արտահայտություն պետք է դիտել նաև մասսայական գրանյութի և մասսայական, ժողովրդի մեջ ավելի շատ տարածված առօրյա գրատեսակի օգտագործումը գրչության մեջ, ինչպես նաև ժողովածուների աշխարհիկ, գիտական նյութերի պարունակությունը:

Դավիթ քահանայի առաջին ժողովածուն ավելի շատ աշխարհիկ, գիտական նյութեր է պարունակում, քան դավանաբանական: Ժողովածուի 2/3-ը տիեզերական, աստղաբաշխական, տոմարական, պատմաժամանակագրական երկեր են և միայն 1/3-ը դավանաբանական: Եվ այդ 981 թվականին: Երկրորդ ժողովածուն կազմված է քաղկեդոնականության դեմ պայքարելու, ուղղադավանությունը պաշտպանելու համար: Չեղինակն այն կոչում է «Ծաղիկք հաւատոյ»: Սրա մի մասը նույնպես պատմական, ժամանակագրական և երկրաչափական, թվաբանական, վարքագրական նյութեր են, ապա գիտնական վարդապետների, եկեղեցու հայրերի և այլ բնույթի երկերից քաղվածքներ: Դավիթ քահանան պայքարում է ոչ միայն եկեղեցու հայրերի, կրոնական երկերի, այլև պատմական, ժամանակագրական ամբողջական կամ քաղվածո երկերի միջոցով, պատմական անձնավորությունների գործունեության ցուցադրումով, նրանց խրախուսող օրինակով, նրանց ճանաչումով, որոնք պետք է ազդեն հակառակորդի վրա, «որպես հուր զկապար, եւ որպես արեւ՝ զեղեմն» և սարսափեցնեն պիղծ անհավատներին «որ արինակ զարհուրի, կաքաւ ի շառաչմանէ արիացեալ արծուոյ», ինչպես գրում է Դավիթ քահանան:

«Գիտություն եւ տեխնիկա», 1982, թիվ 4, էջ 1-6:

### ***ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ***


*կայքի կողմից. պատմաբան, ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը (1922-2004)*

*իրականացրեց հայերեն հնագույն թղթյա ձեռագրի հրատարակությունը երկու ստվար հատորով՝ 1995 և 1997 թվականներին:*


Մատենան գիտութեան եւ հաւատոյ Դարթի քահանայի (նմանահանություն), (առաջաբան), հատոր 1, Երևան 1995, 772 էջ:

Մատենան գիտութեան եւ հաւատոյ Դարթի քահանայի (ուսումնասիրություն, վերծանություն, ծանոթագրություններ, ցանկեր Արտաշես Մաթևոսյանի), հատոր 2, Երևան, 1997, 570 էջ:





Առաջին հատորի կազմը:



Թղթե ձեռագրի թերթերի լուսանկարներ, որտեղ երևում են նաև քայքայված (թանաքակեր) մասերը, որոնց վերծանությունը չափազանց աշխատատար գործ է եղել: